

891.995
0-26

ՄԱՐՍԵԼ

ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԱՀ



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ՀՅԱՂԻ ՀՅԱՂԻ

ՀՅԱՂԻ ՀՅԱՂԻ

ՀՅԱՂԻ ՀՅԱՂԻ

891.99v
U-36

ՄԻ

ՍԱՐՎԵՐ

2011-17

ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԱՀ

(ՊՈԵՄ)



ՀԱՅԹԵՏՀՐԱՑ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿՒՑ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940

29 JUL 2013

12577




308
47



89741

САРМЕН
ГЕРОИЧЕСКАЯ СМЕРТЬ
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.



ՆԱԽԵՐԳ

Աշուն ե, բերքառատ, բերկրալի աշուն:
Նստել եմ պուրակում մտախոն ու լուռ.
Մաքրաջինջ յերկինքը վորպես մի անհուն,
Անսահման ովկիանոս՝ խաղաղ ե ու լուրք:
Իմ շուրջը ամեն կողմ ծիծաղում են արդ
Ծաղիկներ, ծաղիկներ և' գունեղ, և' վառ.
Արևը վերևից այնպես ձեռնառատ
Վոսկեշող անձրկ ե հորդում, քափում վար:

Պուրակի կենտրոնում աստղագիտարան,
Խոկ շուրջը շողողուն շենքեր ու շենքեր,
Մեղմ հովից թփերը փարվում են իրար,
Առվակը կարկաչով նամբա յե ընկել:
Մոտակա ծառուղով անցնում են արագ
Կենսալինդ աղջիկներ, ջահելներ թիկնեղ,
Բորբոքվում ե վորպես ոյուրական մի այդ
Իմ յերկրի առորյան մեծ ու փառահեղ:

29 JUL 2013

12577




308

47



89741

САРМЕИ
ГЕРОИЧЕСКАЯ СМЕРТЬ
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.



ՆԱԽԵՐԴ

Աշուն ե, բերքառատ, քերկրալի աշուն:
Նասել եմ պարագում մտախոհ ու լուռ.
Մաքրազինց յերկինքը վորպես մի անհուն,
Անսահման ովկիանոս՝ խաղաղ ե ու լուրք:
Իմ շուրջը ամեն կողմ ծիծաղում են արդ
Ծաղիկներ, ծաղիկներ և' գունեղ, և' վառ.
Արևը վերևից այնպես ձեռնառատ
Վոսկեշող անձրկ է հորդում, թափում վար:

Պուրակի կենտրոնում աստղադիտարան,
Խոկ շուրջը շողշողուն շենքեր ու շենքեր,
Մեղմ հովից թփերը փարվում են իրար,
Առվակը կարկաչով նամբա յե ընկել:
Մոտակա ծառուղով անցնում են արագ
Կենսախինդ աղջիկներ, ջահելներ թիկնեղ,
Բորբոքվում ե վորպես դյուրական մի այդ
Իմ յերկի առորյան մեծ ու փառահեղ:

Ու սմա խայտալով՝ վորպես ժիր ալիք,
Մշտակառ ժողիոր խոսուն աչքերում,
Թեվի տակ պայուսակ, ձեռքին խաղալիք,
Անցնում ե մի աղջիկ գանգրահեր, սիրուն:
Անցնում ե աղջիկը... Բայց մի այրազ եռչ
Տիրում ե մտքերիս, հույզերիս, հոգուս.
Հիշում եմ քրոջս աչքերը խաժուժ,
Ու գանգուր վարսերը— սեփարույր վորկույզ:

Հիշում եմ: Աշուն եր, սոսկալի աշուն,
Անհաց եր, անկրակ մեր խրնիքը խարխուկ,
Հեկեկում եր բամին ինչպես կույր աշուղ,
Մեր յերգը լալկան եր, անարեվ, տխոր:
Օազմադաշու եր գնում քրտնատանց պյուղացին.
Ել վոչ վոք չեր ներկում արտերը խոպան.
Յերկիրը կարուտ եր մի պատառ հացի,
Սարերում չեր յերգում և վոչ մի չորան:

Հիշում եմ այնպես վառ, կարծես յերեկ եր.
Ունեյի մի չքնաղ, լուսածպիտ քույր,
Հայացքը զարնային խնդուն ցերեկ եր,
Հոճիքերը՝ քոչնի թել, մազերը՝ գանգուր,
Ո՛, նոր եր կոկնում, հապակ առնում նա,
Ցերք բուքը մահաշունչ մեր դուռը ծեծեց,
Ու սովը ծանտատես մի գողի նման
Մեր խրնիքը մտակ, վորպես կրծող ցեց:

Նիհարեց, դժգումեց իմ քույրը բոկուն,
Աչքերը փոս ընկան, հուրերը հանգան,
Ցեկ աշնան տխրամած, մի ցուրտ առավոտ
Նա մտավ՝ ամեղողին՝ երվանդ ու ամկար:

Որերով տառապեց, անընդհատ հազար,
Խրնիքը խոնակ եր, հատակը քարնս,
Ու յերկիրիս հուրիքան այզը չուսած
Մահացավ. իմ քույրը սեվ հացի կարոտ:

Անխնա հնգում եր սովի գերանդին...
Ո՛, քանի մանուկներ մեռան սովականը,
Խշխում եր բռնւցքը ծանու խմբավետը.
Մեր կյանիքը զիշեր եր, արմալի, խավար:
Ու մանկան վիշապն եր ծառացել մեր դեմ,
Բանուրյան նիրամն եր մեր շումչը խեղդում,
Մեր սրտում դատնորեն մահացող վարդեր,
Չունեյինք վո՞չ ծիծաղ, վո՞չ սեր, վո՞չ խնդում:

Բայց ահա մուտերիս ամպերը համկարծ
Ցրում ե ցնծուրյան մրբիկը բերկրուն,
Հիշում եմ մի չքնաղ, մի վառ լուսարաց
Այդ դժնի, մահանոտ, այդ ցուրտ որերում:
Հիշում եմ Մայիսը հնամյան Ղարսում,
Ու նրան եմ հիշում, այդ խիզախ ներսին,
Տերերի, հիմ դեմ մարմնացած ցասում
Այդ խոհուն, խանդավառ մարտիկ Ղուկասին:

ՅԵՐԳ ԱՌԱՋԻՆ

1

Արելին ինչպես վոսկի հասկով բարձված մի սայլ
Հանդարտ քայլով մոտենում ե մայրամուտին.
Անտառ, առու, գետ ու գետակ, դաշտ, ձոր ու սար
Վարսավիահար սպասում են յեկող մուրին:

Ու ամպակերտ պալատները՝ քամուց յերեր՝
Խորտակվում են, թափվում ովկիանը յերկնքի.
Մեր լուսերն Են ինչպես հսկա հուշարձաններ
Կանգնել նամբին գարնանային արեգակի:

Յեվ՛ Աս՝ ինչպես մի հրդեհված վիրխարի դեզ
Մընազգի մեծ դարպասից ներս և մտնում.
Դժգումում են, կապտում ամպերը վոսկեղեզ,
Որը ֆիշ-քիչ գունատվում և ու լուր մքնում:

Գիշերն աշխարհն առնում է իր քեվերի տակ,
Ինչպես կայրի ովկիանոսում ներկված մի քող,
Խորանում են մուրի կիրճերը դժնդակ,
Վորսի յելնում և՛ մարդասպան, և՛ գայլ, և՛ գող...

2.

Հիսնամյա մի տղամարդ
Բահը քեվին, ծանրաբայլ,
Ինչպես մոպյլ մի մահապարս
Քայլում եր լուր ու անկար:

Անցավ-իրեն մանկուց ծանոք
Փողոցներով աթխնդում,
Կանգնեց հանկարծ մի շեմքի մոտ,
Դուռը բացեց, մտալ տուն:

Նրա աչքերը վշտակի
Սառ բռնի մոտ ի՞նչ գուան:

Փեց վորք մամուկ, հարսը այրի,
Հազին հազար կարկատան:

Կիմը ծոված հին իլիկին՝
Մանում եր ու մղկում,
Հարսը հնմաշ մի շոր ձեռքին՝
Կարկատում եր, կարկատում:

Ու տեսնելով՝ Գարբել բիձին՝
Նա խոնարհում վեր բռակ,
Մանուկները ծլվլացին,
Տատը քելը վար դրավ:

Բահը հենեց մընս սյումին,
Ցեկալ նստեց ծերութին.
Նրա աչքերն նման եցին
Շանթերով լի անհումին:

Հարսը դրեց քուրսու վրա
Մի բաս ապուր, մի չոր հաց,
Հավաքվեցին շուրջը նրա
Մանուկները կիսաբաղ:

— Ես ի՞նչ տարի յեր՝ տեսանք,
Շումն ել եսպես չեր ապքել,
Ես ի՞նչ որի յեր՝ հարանք,
Ես ի՞նչ կյանք ե, Գարբել:

Գարբելը կնոշ շեշտակի հարցին
Արձագանքեց մի այրող բողոքով.

«Հեղի յԵն խտանում մեր ջար ու հացին,
Թալանում, տպնում յԵզ, վռչար ու կով:

Ել յԵրկար եսպե՞ս ապքել չեմք կարսդ,
ԹԵ-չքացվի մեզ փրկության մի գուռ:
ՄԵր վռտքերի տակ վառվող, շարժվող հող,
ՄԵր գլխի վերեվ՝ հազար բերան բուր»:

Ճիշտ նույն ժամին գյուղի հայտնի ՄԵլքոն ուստաձ
Այրված սրտավ իր սեվ բախտից եր տրտնջում,
— Ես ի՞նչ կարգ ե, վոչ որեմք կա, վոչ դատաստամ.
Ժողովրդին սպանում են, մորքում, տանջում.
Կռո-թեզյառը, հարկ ու տուրքերը ահազին
Հանում են ես արհեստավոր խալխի հոգին:
Տանշվամ եր Գաբրիելի պրկից Մուրան,
Զիլախ Սերը, Սերի դրկից այրի Սարոն,
Սրա դրկից են Հոտանենց հալալ Հարոն,
Սրա դրկից կորին Կարոն՝ սարի սովոր,
Ալեկոծվում, ծառս եր լինում գյուղը բոլոր:

Յեվ գիշերվա այդ ահակի խոր խալարում
Մի տխուր յԵրգ մորմոխում եր, փռվում հեռուն:

— Գնան, ել չգա ես տարվա տարին,
Զյուն, ձմեռ բերեց կանաչ դաշտերին,
Կոփ, դուման ե սարի փեշերին,
Իմ յարին տարան, ել յետ չբերին:

Վա՛յ, բոյդ չորմա,
Վայ, աչքդ քոռմա,
Աղարեկ ֆյոլսվա:

Թեմուրազ մենաց իմ ազիզ Սեբոն,
Մի բռնիր կրակ բռդեց իմ սրտում.
Կոխի սաքբազի՝ որը խավարի,
Կուռը կոտրվի, ոճախը մարի:

Վա՛յ, բոյդ չորմա,
Վայ, աչքդ քոռմա,
Աղարեկ ֆյոլսվա:

Իմ ազիզ յար ջան, դու ո՞ւր գնացիր,
Կանաչ գարուն ե, յԵ՛կ, վերադարձիր,
Ա՛յս, են ո՞վ զարկեց իմ ջիվան յարին,
Գնա, ել չգա են արնոն տարին:

Վա՛յ, բոյդ չորմա,
Վայ, աչքդ քոռմա,
Աղարեկ ֆյոլսվա:

3.

Խուլ խրճիքում, սեղամի շուրջը բռլորած
Խոսում եյին յԵրկարուղու յԵրեք բանվոր.
ՄԵկն իր կյանիքի տասնեվիննը նոր բռլորած,
ՄԵկը շահել, մեկի մազերը ալեվոր:

— Բանոն են դարձրել ես գեղեցիկ յԵրկիրը մեր,
Վունանակ են արել չարքաշ ժողովրդին.
Քարշ են զալիս արյունապամ ու կիսամեռ
Հազարավոր ծեր, պատամի, մամուկ ու կիմ:

— Ալեքպում ցնծություն ե, ազատություն,
Մերոնք են ներ տիրականը ամեն բանի.
Խնդրությամբ ե լցվել սիրութ անհող, անտուն
Ռանչպարների, բանվորների, չոքանեների:

— Բայական ե յերկիրն հանձնեն մասին, սովոր
Մեզ կիրկեն գենք, գնդացիր, սուր ու սվին:
Ասաց ջահելն ու վեր կացալ պահել քափով,
Աշխերն ինչպես ցաման մի զույգ բոցավառ բռվ:
Մնաս բարով ասաց իր ծեր, իին զինակցին,
Պատաճառ հետ դժմից յելան ու գնացին:

4.

Մարդկային ձայները լոել են վազուց,
Խավարի ովկիանն ե ծածկել սար ու ձոր:
Մաքերում շողում ե բոցերի մի խորձ,
Հովինն ե բորբոքել խարոյին երածորի.
Ու մքնում վորպես մի հսկա քարածայո
Բարձրանում ե բերդը ծանր ու զայրագին,
Իսկ բերդի վատքի տակ մեղմ ու տիբաճայն,
Ղարսաչայն ե լալս ինչպես սգվոր կին:
Այդ ժամին նբագի լույսի մշուշում,
Տնակում բոշեվիկ մի եկն բանվորի
Բոցավառ մի սերունդ ուղին ե նշում,
Վոր խիզախ գնդերը տանի գրոհի:
Թշնամին չի քննել, սարսափ կա սրսում,
Լրտեսներն են անվերջ խավարում վխտում,
Բայց նրանք սրտերում արեվ ու գարուն,
Ընդվզման փրկարար սրերն են կռում:

Ահա տես այն շողում ուչքերով աղջկան,
Այն խիզախ պահանուն, այն հսկա քաջին,
Այս խրճիք-ամրոցում վախլիռտներ չկան,
Բոլորն ել կընթանան շարքերումն առաջին:
Ո՛, նայիր այդ խաժակ, գանգրաներ մարդուն
Խոռո՞ւմ ե, քե՞ վառվում ինչպես մի քուրա:
Բոլորի աչքերը այնպես բացլտուն
Հառած են այդ ըմբռոտ կորյունի վրա:

— Դժգոհ են բոլորը այս դաժան կարգերից,
Եղբան ե հոշուում բանվորի ձեռքն ու վոս,
Գյուղացին խեղդվում ե սոսկալի կարիքից,
Բանակը դարձել ե բռնկում չոր վառող.
Բավական ե մի կայծ, վոր երդեհ բռնկվի,
Յերկիրը ընդվզման կրակով մրրկվի:

Գանգրաներ մարդու երաշունչ ճառում
Կար հույզի հեղին ու յերկարյա կամք.
Նա պատկերում եր ու բոցայնառում
Գալիք որորի շողովուն մի կյանք:

Յեվ ինձ ք-վում եր, վոր այդ վայրկյանին,
Յերե ուզենար այդ ջահել տղան,
Իր մեջ ամբարլած ուժովն ահագին
Դարավոր կաղնին կաներ տեղական:
Նրա աշխերի կրիմ դիմանալ
Չեր կարող յերքեք վոչ մի չնապ կին,
Յեվ ինքը մենակ, յերե կամենար,
Կարող եր սանձել հողմը մնլեցին:

Ո՞, Ղրւկասն եր դա, դերձակի վորդին,
Հատակից յելած, քարձրացած մի մարդ,
Հոգով միշտ կապված բում ժողովրդին,
Կաղնու պես ամուր, վեհ ու խորարժան:
Ժողովը լարված լսում եր նրան՝
Ասկամբուրյան մրրկահավին.
Նրա աչքերը յերկու հուրիքան
Ու կենաքրքիռ խարույկներ եյին,
Նրա նակատը ներմակ մարմարի
Մի չնաշխարհիկ; սբանչելի շերտ:
Են վո՞ր դիցուհու սիրտը չեր մարի,
Յերք տեսներ ժաշին այս հրաշակերտ.
Սեվ գանգութները հով եյին անում
Խոհուն, խելացի այդ լայն նակատին,
Զենաղ գլուխը նման եր անհուն
Յերկներւ կորած լեռան գագարին...
Ղուկասն ավարտեց իր խոնքը բոցոն,
Մարտերի ուղին ուրվագծեց զիմզ,
Մագնիսացի եր այդ խրճիքը ցուրտ,
Լեզու յեր առել ամե՞ն, ամե՞ն ինչ...

5.

Ժողովը ցրվեց: Գնացին նրանից
Դեպի ամրոցներ, դեպի գորանց,
Դեպի զնդերը խառն ու բագմերանց,
Ու բանվորական եյուղերն ալեկոծ:

6.

Գետի յեգերով յերկու ստվեր
Դանդաղ ժայլում են ու գրուցում.

Առաջ քռիչքի անտես քնվեր՝
Դեպի գալիքն են արագ քռչում:

— Ղուկասն, յես այնպես վառ կարոտով
Ռոգում եմ տեսնել մեծ Լենինին,
Յեթե հաղթեցինք ու հոգերեկ
Արշալույս ծագեց մեր լեռներին,
Կերպամ տեսնելու մեծ Լենինին.
— Կհաղքենք, Սուրե՞ն, մի կասկածիր,
Մեզ չի դիմանա և վոչ մի ուժ,
Չե՞ վոր ոռուսական յերկրում անծիր
Վաղուց ե ծագել հուր արշալույս:
Լենինին տեսնե՞լ ես փափազում,
Հապա յես ինչքա՞ն եմ փափազել,
Քանի գիշերներ՝ պառկած անժուն
Նրան եմ հոգուս մեջ վառ պահել:
Կհաղքենք, Սուրե՞ն, ու ցնծության
Որեր կրերենք ժողովրդին.
Կրանանք դռները գիտության,
Ազատ կշնչի հողի վորդին:

Մեր լենք գետերի կատաղի ձին
Կդառնա, Սուրեն, ելու գրասուն
Շռգշռուն լամպերը լուսածին
Կնախշեն յերկիրն—սար, ձոր ու դաշտ:
Նայիր յերկնեֆին ինչքա՞ն դյուրիչ,
Ինչքան գեղեցիկ աչքեր ունի,
Մանկուց հմայել, գերել ե ինձ
Աստղատառ գիրքը մեծ անհունի:

Դաժան որերը կանցնեն, Սուրեն,
Կվերածնվլի յերկիրը մեր,
Անքիվ շշակներ գիլ կսուլեն,
Կերգեն հասկերի ծփուն ծովեր:
Յեկ այն ժամանակ մենք վիճչև լույս
Կկարդանք գիրքն այս հայերժական,
Բայց այժմ արի փոքրկահույզ
Դրոհենք դեպի այդ մեծ ապագան...

ՅԵՐԳ ԷԵՐԿՐՈՐԴ

1.

Մայիսյան պայծառ լուսաբացին
Կարմիր դրոշները ծփացին:
Ժողովրդական գետը վարար
Յելազ ափերից ու հորձանեց,
Խավարից հետո արելն անմար
Մեր լեռնաստանի սրտում ծաղկեց:

2.

Գարաժը դարձել ե բռնկված
Ապստամբության հզոր շտար.
Զինավառ մարդիկ հրավառված
Մտնում են, յելնում շտապ-շտապ:
Այնտեղ, դեկի մոտ, հոգով անսի,
Կանգնել ե Պուկասը դեկավար,
Փայլում են վորպես կայսարդիչ ջահ
Նրա աչքերի աստղերը վառ:

Գրում ե, խոսում, հրամայում,
Յեռանդից վառվում ինչպես խարույկ,
Բոլորի սրաերը հմայում,
Ծերուկին դարձնում ժիր ու առույգ,
Թշնամու սիրտը լցրած սարսափ՝
Գարնան գետի պես խնդուն ու հարդ,

Գալիս են շարժերը ապստամբ
Ավտոյով, եեծյալ ու եետիունի:
Նայիր են բանվոր Մանուելին,
Ուստա Մելքոնին, Գարբիելին,
Դարբին Խվանին, հյուսն Ահմադին,
Են հսկա հովիկ քուրդ Ասաղին,
Ու են գրաշար Ալեգարդին.
Թշնամու հանդեպ ինչպես մի մարդ
Կանգնել, մզում են հակատամարտ:

3.

Ժողովուրդն ահեղ մի հարվածով
Տիրեց քաղաքին, բերդին մոայլ.
Ծփում ե անվերջ խինդի մի ծով,
Կյանքը գովում հազար քնար:
Քանդում են վորչերը խորախոր,
Զարդում, խորտակում բանու ու զնդան,
Հնչում յերգերը և՛ վառ, և՛ նոր,
Դդրդում հիմնը ազատության:
Ինչպես բաց անես դուռը բանտի,
Ազատ արձակես տանջվողներին,

Այնպես բացվեց դուռն ժողովրդի
Հազարամյա յերազներին :

4.

Շշմած քշնամին սրափվեց հանկարծ,
Յրիվ ուժերը հավաքեց բոլոր,
Յեվ սարսափահար, խոցված, մոլեգնած,
Վորպես ամպ պատեց արեվի բոլոր:
Ու ինչպես սոված գայլերի վոհմակ
Հոգեվոր հայրերն հավիտյան անհազ,
Խմբավետ Մկոն, Հովասափ աղան,
Վաշխառու Հունան, Աղաքեկ քյոլսվան,
Հողատեր Խուդոն, Խանութպան Ալին,
Իրենց խաժադուժ խմբերը առան.
Յեկան, բափվեցին ու կալմեջ արին
Ապստամբուրյան Խիզախ քաջերին,
Բայց սարսափեցին, կանգ առան լոին.
Այնուեղ շաղում եր ինչպես վառվող սար
Հեղափոխության հուրը վուկեվարդ:
Ու բոցավալից մի անհավասար,
Անեղ, անխնա, դաժան գոտեմարտ:
Քաղաքում, սակայն, գիշեր ու ցերեկ
Թշնամին ազատ բափառում եր դեռ,
Առաջվա նման մնում անեղերք
Հողի, հանդերի, ծով հոսների տեր:
Դեռ նրա վզին շեշտակի բափով
Զեր իշել սուրը կայծակնաբերան,
Բայց մահին դողը իրե ողակով
Բոլոր կողմերից պատել եր նրան:

Ու նա վիրավոր արջի պես անզուսայ
Ապստամբության ամրոցն ողակեց,
Յեվ ժողովրդի խորքերն ալեծուփ
Ցոք ցնցոտապատ լրտես ուղարկեց...

5.

Յնձուն, ծիծաղուն քաղաքն անհամբեր
Սպասում եր իր խիզախ բարեկամ
Մուսայելյանին համբավաբեր,
Զրահապատին հերոսական:
Բայց, ավաղ, նրանք չեկան ու չեկան...

6.

Թողեց քաղաքը զորքն ապստամբ,
Յելակ ամրացավ ժայռուտ բերդում.
Թնդանորները վորպես սեվ ամպ
Վորտուում եյթն ու վորտուում:
Ղուկասը ինչպես սեգ գորավար
Վարում եր կոմվը փոքորկուն,
Դիրքից դիրք սուրում ու մշտավառ
Բազուրյան կրակը բորբոքում:
Վոգեվորում եր, հուսավառում,
Մարտի խարոյկը պահում անշեջ,
Ապստամբության նավն եր վարում
Ալեկոծ ծովում մութ ու անվերջ...
Մի խավար գիշեր հանկարծակի
Թշնամին հորդեց բերդի վրա,
Բայց դեմ առնելով համագալին



Տեղում կանգ տռավ ինչպես իիդրա:
 Ու մարտը դարձավ՝ որհասական.
 Կովում եր մեկը քառաւնի դեմ.
 Նայիր լեռնցի այդ աղջկան—
 Տասնինն զարուն չի տեսել դեռ,
 Ու նայիր նրա կողքին չոքած
 Յերիտասարդին գեղագանգուր.
 Սրտերում իրդեն, աչքերում կայծ,
 Կովում են նրանք—յեղբայր ու քույր:
 Բայց ահա վոռնաց մի զնդացիր,
 Սլացավ զնդակը վողրաձայն
 Ու ընկավ ջահելը նորածիլ
 Վորպես փշրված չքնաղ արձան։
 Ընկավ ու սաստիկ նիշ արձակեց.
 Արյուն եր հոսում նրա կրծքից.
 Քույրը իր ձեռքի գենքը զցեց,
 Յեղբորը գրկեց ջերմ, կարեկից։
 Աչքերն հանեցին մեկը մեկնն,
 Խամրում եր տղան ինչպես իրդեն,
 Նրա այսերին դեղնում եյին
 Յերկու դյուրական կարմիր վարդեր։
 Նայեց իր քրոջ յերկա՛ր, յերկա՛ր,
 Քույրը լալիս եր սրտակուր
 Ու ասաց հանկարծ ձայնով անկար—
 — Սիրելի Զվարթ, քո ձեռքը տուր,
 Մնաս բարով, մեռնում եմ յես,
 Յեկ, մի սրտանց համբուրեմ քեզ,
 Իմ փոխարեն դու մայրիկին,
 Բալիկներիս ու Զարիկին

Կհամբուրես ջերմ, սրտագին...
 Յեվ յերե սրտանց սիրում ես ինձ,
 Լսիր, կատարիք խոսքն իմ վերջին.
 Դցած իրացանդ վերցրու նորից,
 Խոցիր, հարվածիք ժամանին։
 Ասաց ու մարեց ինչպես մի ջահ
 Հերոս մարտիկը այն ժրաշան։

7.

Զվարթի կողքին յեռուն, յեռանդուն
 Վառվում, կովում եր Գարբիել թիճան,
 Գարբիելի կողքին՝ առույգ մշտարքուն
 Խաշնարած Ասադը ահեղաձայն,
 Ասադի կողքին՝ Սամսոնը դարրին,
 Սամսոնի կողքին՝ Սերգոս նախրապան,
 Սերգոյի կողքին՝ սեվաչ Սիրարփին,
 Սիրարփու կողքին՝ մի հնոցապան,
 Խակ նրա կողքին մի մեհենալար...
 Այսպես անընհատ իրարու կողքին՝
 Հույսի կրակը միշտ պահելով վառ՝
 Մարտնչում եյին տղամարդ ու կին։
 Բոլորը իրկեզ, հորդահույզ հոգով,
 Մաքառում եյին, այրվում զռո մարտում.
 Մեկը մեռնում եր հաղթական յերգով,
 Մեկը՝ սիրածի կարոտը սրտում...

Մեկը ազդրերից, կրծքից, աջ քելից
 Ծանր վիրավոր, մարտնչում եր դեռ,
 Մեկը՝ վախեցող չարքերից, դեվից,
 Դուկասի զնդում առյուծ եր դառել։
 Ու կուրծքը տված քշնամու իրին,

Բերդում կողպված, ծարավ, սովահար,
 Ապստամբները մարտնչում եյին
 Յե՛վ հոգեկորով, և՛ ենրոսարար:
 Բայց այդ նույն ժամին դավադրության
 Ան եր գաղարվում նրանց վատքի տակ,
 Վայրկյան առ վայրկյան վիշտափի նման
 Մըսում վալորվում, դառնում հազարտակ:
 Բերդի հեռավոր մի խուլ անկյունում,
 Ֆելդֆերելական կույտն եր հավաքվել.
 Մի լաբիրինտոս վաստայն եր հինաւմ
 Նրանց ավագը— անունը Սամվել:
 Սամվել,— այդ մարդուն ո՞վ չեր նանաշում.
 Այդ նա եր ծեծով սպանեց Սերին,
 Այդ նա եր լլկում, մաշկում, չարչարում
 Չարքաշ զինվորին ու ժողովրդին:
 — Այսպես, ուրիմն, հարգո պարոններ,
 Վնոված ե հարցը, խոսդներ չկան.
 Դուլ' Մոսես, Մարտին, գուեֆ պարաններ,
 Հսկեֆ, վոր նրանի բերդից դուրս չգան:
 Այսոր լուսաստղի դուրս գալուց առաջ
 Մնեմ կշը այնոք բոլշեվիկներին,
 Յեկ արեվը գեռ սարերին չառած
 Նրանց կկախենք բերդի ժայռերից:
 Թող աշխով տեսնի, ահից սարսափի
 Ժողովորդն ահեղ, բիրս ու ապստամք:
 Թե չե նա մեզ էլ մի որ կլափի
 Եր ամենակուլ մեծ ազահությամբ:
 Ցրվեֆ, սպասեֆ ազդամշանին,—
 Ասաց Սամվելը երամայողաբար.

Ներսից մատնություն, դրսից քշնամին
 Հրե անձերի եր մազում անդադար:
 Յեվ խոր գիշերին, յերք վոստխն արդեն
 Յեկել, հասել եր բերդի պարսպին,
 Յերք անհաց, անջուր, անգնդակ, անգեն,
 Յերկրից կորված ու աչքը նամբին
 Մաքառում եյին զորքերն ապստամք,
 Յերք ներսում վոստխն քակարդ եր լարում,
 Վերից քակարդում եր հուր-տեղատարափ,
 Ու քնդանոքն եր վոտնում խալարում,
 Ղուկասը մի բուռն կորյունների հետ
 Վորապես փոքրկուն, խանդակառ տիտան,
 Ճեղքեց քշնամու շարքերի շգրան,
 Սուզլեց խավարում ու կորակ անհետ...

ՅԵՐԳ ՅԵՐՐՈՐԴ

1.

Լեռնային նամբան նեղ, ոճագալար
 Զգվում ե գեղի անօրոշ հեռուն
 Ու մբնում տաղուկ, մեղմ ու միալար,
 Հուզված յերգում ե վարարած տուն:
 Քայլում են նրանք տառապած, հոգմած
 Բայց անընկնի ու միշտ հուսավառ:
 Մերք հանդիպում են սարերի անանց,
 Հերեդի հորդուն, ծայլերի սուր—սայր,
 Մերք նրանց վատուժ վոտների տակից
 Խալուս, յերերուն, քարերն են պրկում

Ու անդունդների խորունկ հատակից
 Փնչող հեղեղից հազիվ են փրկվում:
 Մերը մոլորդում են ու կորցնում նամբան,
 Լեռներից իշնում ճռը դժվարանց,
 Բայց վոչ տանջանքը, վոչ մուրք դաժան.
 Զեն ահարեկում ու սաստում նրանց:
 Քայլում են նրանք ու ահա հասան
 Զորում ծվարած են Մագրա գյուղին.
 Գյուղի տերտերը — նենցության հեսան
 Խմբով ճարն իջակ ու փակեց ուղին:
 Յեվ խոռվահույզ, հոսուն խավարում
 Բորբոքվեց կովի բոցը վարարուն...
 — Նայե՛ք ագռավին այդ կոկոտն,
 Բանդել և ուզում արծիվներին,
 Սանձել և ուզում ազատության
 Հպարտ, հաղթափայլ նժույգներին,—
 Ասաց Սնուրենը ինքնամոռաց
 Ու նրա զնդակն տեսդ սուրաց...
 — Զարկե՛ք, ընկերներ, ցած գցեցե՛ք
 Այդ գիշերային խրտվիլակին,
 Արագ սրացե՛ք, կամուրջն անցե՛ք,
 Խփե՛ք թշնամու թեվ — թիկունիքին,—
 Ասաց Ղուկասը ու հողմաքափ
 Խումբը գրոհավ քշեց տուազ.
 Ծկվեց տերերը թեվաքափ
 Ինչպես ջրահեղա մի արարած,
 Ինչպես ծեծկված, ջարդված դիակ
 Ընկդմվեց մուրի ծովումն անտակ:
 Ղուկասի խումբը կամուրջն անցակ,

Բոնեց դժվարին մի նանապարի.
 Վորախ վիրխարի, ցուրտ քարանձավ՝
 Լուտ եր գիշերը, լուտ ու անբան...

2.

Թափառուն խումբը ամբողջ գիշեր
 Քայլում եր դաժան նանապարեավ.
 Մեկը պատմում եր դյուքիչ հուշեր,
 Մեկը տարվել եր իր խոհերով:
 Մեկը վորպես մի մեծ նկարիչ
 Ուրվագծում եր վառ ապագան,
 Մեկը այնքան խոր, այնքան եռողիչ
 Վերեիշում արերը արեվակամ:
 Յեվ արշալույսը նոր եր բացվում,
 Վոչխարը նոր եր սար բարձրամում,
 Յերը նրանք տանջված, մաշված, անբուն,
 Արգինա գյուղի ճորը մտան,
 Ընտրեցին կանաչ գորգը ծաղկուն,
 Նստեցին, վոր քիչ հանգստանան:
 Կողին ջրաղաց, դիմացը գետ,
 Ճորը ծաղկախ, շուրջը լեռներ,
 Բնության տված երաշակերտ,
 Անգին պարգևը կարծես լիներ:
 Ու ծարակ խումբը վայելում եր
 Բնության գինու վնիս քամից.
 Մեկը նստել եր, մեկը թիկնել
 Ու ամուր բոնել երացանից,
 Մեկը ննջում եր՝ յերկար պառկած
 Մեկը սուլում, յերք մեկ ել հանկարծ...

Վեր թռավ, տեղից Ղուկասը արքուն,
Կանչեց՝ լնկերներ, արագ դեպի զենք.
Խումբն ամբողջովին մի ակնք-արքուն
Պատրաստ կանգնել եր՝ մարտունակ ու սեգ:
Տեսե՛ք թշնամին մեզ հետպանդել.
Յեկել, հասել և մինչև Արգիթա.
Սա մահու— կյանքի մարտն ե, լնկերներ,
Ուրիշ յելք չկա, կամ մենք, և կամ հա...
Ղուկասն իր խոսքը չեր ավարտել դեռ,
Յերբ պղմկալի ճայները լսվեցին.
Յորք քեռնատար ստրող ավտոներ
Հասան գետափին ու կիպ կանգնեցին:
Օած քռամ թափով, անհապաղ, արագ,
Վոստից մինչ գլուխ զինավառ մարդիկ,
Նրանց հետևից ճայներով վայրագ
Գալիս եր, կարծես, արջի հարսանիք:
Յեկան, թափվեցին գյուղի բռունցքներ—
Արեախում մարդկանց մի պղտոք ամրախ,
Կոհին սկսվեց, շաշեցին զենքեր,
Թնադաշին սար, ձոր, քար, քարայի ու հող:
Գոռում, գոչում եր Ավագն աժդահա,
Խմբին սպառնում կախաղան ու մահ:

Մուրադն ես կողմից, Զելինն են կողմից
Զայնակցում եյին մոլի Ավագին.
— Բնաշինջ մնենք նրանց մեր հողից,
Ել չշնայենք վո՞չ մանուկ, վո՞չ կին...
Յեվ բորբոքվեց մի յեռուն գոտեմարտ

Արգինա գյուղի բուրալի ձորում
Քաջերի սրտում Մայիս կենապատ,
Աշեմբաւմ գարնան կայծակն եր ցոլում:
Ինդակներն եյին անընդհատ սուրում
Ու թափվում թնչպես կապարե կարկուտ
Արշավում եյին Ավագը գուլում,
Զելիմ խանն ահեղ, Մուրադխանն անգուր:
Գնդակներն այնքան բուռն շառաչեցին,
Հրե կարկուտը այնքան հարդ տեղաց,
Վոր սար— ժայռերը եկմֆից ցնցվեցին,
Ու գենի ջուրը փրփրաց, յեռաց:
Թշնամու շղթան գրահեց առաջ
Փակվեց, նեղացավ ինչպես ոճի տնցք,
Ղուկասը հանկարծ կուզեկուզ սուրաց
Վորպես հողմակոծ ովկիանի հորձանիք,
Ու ձեռքի նոնակն ինչպես յերկնի շանք
Նետեց թշնամու թանձք շարքերում.
Լնկավ Ավագը— այդ հայ խանը ժանու,
Այդ անքագ շնիք Հայաստան յերկրում:
Յեվ կրնկակայն փախավ շարեշար
Ամբոյն ահարեկ ու խունապահար...
Բայց Ղուկասն հանկարծ թափնվ ցած փոկեց
Ինչպես շանքահար մի բազմանյուզ ծառ,
Վիրավոր կրծքով մայր հողին փարվեց,
Կանաչում թագեց աշեմբը պայծառ:
Լնկերներն իրենց քաջ գորակարին
Գնդակների տակ առան ու քռամ
Ու զրադացում հանդարտ վայր դրին,
Վոր վոչ մի չար ձեռք չդիպչի նրան:

Թշնամին դարձավ անզուսայ, սահմարձակ
Ու առաջ սողաց նենգ ու մոլեգին,
Բայց վորպես անխախտ, ամուր ամբարտակ,
Պարքեվահասակ Ռազմովովսկին,
Են ոռու զինվորը անրիծ ու վճիտ,
Տափաստանի պես վեհ ե ու լայնասիրտ,
Դարբիելը արի, սեգ ու դյուցազուն,
Սուրենը խոհուն, մեղմ ու յերազուն,
Պղտոր հեղեղի առաջը առան,
Ցեկողին զարկին, սիրտը խոցեցին,
Հերոսներք պես կովեցին, մեռան՝
Աչքերը հառած վառ այգարացին:

4.

Կամուրջը փակեց ու սպառնալից
Սողաց թշնամու ոճն արնածարավ',
Գալարուն շղթան բոլոր կողմերից,
Մահվան ողակի նման նեղացակ:
Խումբը գրոհեց, հասակ կամրջին:
Կամուրջի վրա դեմք դեմք. յեկան,
Սվին սվինի ու լանջը լանջին
Յերկու դարավոր անհաշտ ախոյան:
Վասվեց մի անզուսայ սվիմակոիվ:
Ցնցվում եր կամուրջն ահեղ բեռի տակ.
Շատերն ծվատված ու արնախուկ
Գահավիժեցին, կորան ջրի տակ:
Քաջերն թշնամուն գետն եյին մաղում.
Զուրը կաս կարմիր արյուն եր կորել.
Նրանց հաղբուրյուն, կյանք եյին մաղբում

Քրտնախաշ մայրեր, ձոր, անտառ ու լեռ:
Ցեղ ահա նրանք անկոտրնել ու վեհ,
Վերջին զրոհով նեղեցին շդքան
Ու մարտնչումով արշավեցին վեր—
Դեպի փարմար մեծ ազատության:

5.

Թշնամին հորդեց, ձորը ներխուժեց,
Կորեց, հոշոտեց ընկած քաջերին,
Թունու քրիջով, փրփրած, հողմածեծ
Ճմլեց, տրորեց այդ կակաչներին:
Ցեղ սուր ու բաւրը նոճելով ոդում՝
Հին ջրազացի դուռը ջարդեցին,
Աչքերով խոժոռ, ժանու ու չարություն՝
Ղուկասի գլխի վերեվ կանգնեցին:
— Ղուկասը, հայե՛ր, ենց սա յե, վոր կա,
Լավ եմ համաշում այս արծվի ճագին,
Ուզում եր դառնալ իայ ազգին արքա,
Յերկիրը ծախեր ոռուս-քոլշեվիկին.
Սուրը Կարապետը, սուրը խաչը վկա,
Ցե՛ս պիտի համենմ սրա սեղ հոգին.
Բայց նա արժան չե մարդկային մահվան,
Նա պետք ե մեռնի եերու—քաջի պես.
Ա՛յ, այսպես, տեսնենք պիտի դիմանա՞,
Թե պիտի գոռա ինչպես մորք-վող յեզ...
Ասաց և ծայրը սուր-սայր սվինի
Դրեց Ղուկասի սքանչելի կրծքին
Ցեղ դանդաղ, դանդաղ հանույյուն դժնի
Խոցում եր կուրծքը, նայում աչք-ունքին:

Արմաքամ Ղուկասն այրվում եր ցալից,
 Բայց չեր հառաջում, նշում, աղերսում.
 Զրադաշտան լուռ արտասվալից,
 Սարսափից, վշտից դողում եր, մրսում...
 Յերկու լայնալանց շահել գառնարած
 Այդ տեսարանին ել չդիմացան.
 — Հերիք ե, հերիք, անխիղն, անաստված,
 Գոռացին նրանք բամբ ու բարձրաճայն...
 — Հերիք ե, հերիք, հոգի ունեցեք,—
 Արձագանզեցին այս ու այն կողմից.
 Ո՛, այդ մոլորված մարդիկն եյլն ինզ,
 Վոր բռնկվեցին գայրույթի հողմից:
 Ինքնակալ խանը շփորվեց մի պահ,
 Կարծես թիկունիքն իջալ ծանր բահ:
 — Հերոսը դո՞ւ ես, խմբապետ Մուրադ,
 Սպանում ես դու վիրավոր մարդուն,
 Ընկած քաջերին մաշկում ես, մորթում,
 Տրորում ես դու դաշտ, արոտ ու արտ,
 Չի կարող անել այդ ամեն մի մարդ,—
 Հերոսը դո՞ւ ես, խմբապետ Մուրադ:
 Քեզնից փրկուրյուն չեմ խնդրում յերբեք,
 Մահկան ժամին ել բոլշևիկ ենք մենք,
 Ովկիանից ել մեծ ու անսպաս ենք.
 Յեվ մի որ կելնեն բանակները մեր,
 Կրացվի յերկրիս արշալույսն անմեռ,
 Յեվ այն ժամանակ վա՛յ ձեզ, գազաններ...
 Մուրադ խանն ահեղ փրկրաց, կատաղից,
 Մվինը խրեց Ղուկասի կրծքում,
 Ամբողջ զորությամբ խառնեց, վոլորեց,

Դուրս թափեց պայծառ սիրտը մրբկուն:
 Զեեց, ծվատեց ծաղկուն հերոսին,
 Վորպես անհագուրդ սպած շնագայլ,
 Ու լուռ հեռացակ գոռոգությամբ սին,
 Դահնի սպանությամբ ծանր ու դժմաքայլ...

6.

Դադարեց վառվելուց խարույկը սրտի,
 Ու հանգալ հերոսի հոգին անպարփակ,
 Դալկացակ մարմարը ներմակ նակատի,
 Փակլիցին աչքերը և' դյուքիչ, և' բարկ...

ՎԵՐՁԵՐԴ

Ընդլվման կրակը վառվեց մեր սրտում,
 Շրմքրաց, փոքրոկից ովկիանը ցասման,
 Յեվ ինչպես վոր գարնան գետերն են հորդում
 Վողողեց մեր հոգու դաշտերն անսահման:
 Գյուղերում, հանքերում, գործարաններում
 Մեծացակ ու կոփվեց պայքարի վոգին,
 Ու լիբռոս զնդերը մեր խոր ձորերում
 Դարավոր զայրույթով բարձրացան վոտքի:
 Գրոհի զնացին ինն աշխարհի դեմ,
 Փշրեցին կարգերը բիրս ու բոնակալ,
 Ու մինչև այսոր ել գրոհում են դեռ
 Մարտական շարքերը մեր հաստատաքայլ:
 Նոր պայքար, նոր կոփվ իին թշնամու դեմ,
 Մահառում յերշանիկ գալիքի համար.
 Ո՛, ել ո՞վ կարող ե մեր կերտածը քանդել,
 Հանգցնել մեր վառած կրակները անմար:

Արնաբամ Ղուկասն՝ այրվում եր ցալից,
Բայց չեր հառաջում, նչում, աղերսում.
Զրադացպանը լուռ արտավալից,
Սարսափից, վշտից դողում եր, մրսում...
Յերկու լայնալանց շահել գառնարած
Այդ սևսարանին ել չդիմացան.

— Հերիք ե, հերիք, անխիղն, անաստված,
Գոռացին նրանք բամբ ու բարձրաձայն...
— Հերիք ե, հերիք, հոգի ունեցեք,—
Արձագանքեցին այս ու այն կողմից.
Ո՛, այդ մոլորված մարդիկն եյին իեզ,
Վոր բռնիվեցին գայրույքի հոգմից:
Ինքնակալ խանը շփոքվեց մի պահ,
Կարծես թիկունիքին իջալ ծանր բան:
— Հերոսը դո՞ւ ես, խմբապետ Մուրադ,
Սպանում ես դու վիրավոր մարդուն,
Ընկած քաջերին մաշկում ես, մորքում,
Տրորում ես դու դաշտ, արոտ ու արտ,
Չի կարող անել այդ ամեն մի մարդ,—
Հերոսը դո՞ւ ես, խմբապետ Մուրադ:
Քեզնից փրկություն չեմ խնդրում յերբեք,
Մահվան ժամին ել բոլշվիկ ենք մենք,
Ովկիանից ել մեծ ու անսպառ ենք.
Յեվ մի որ կելնեն բանակները մեր,
Կրացվի յերկրիս արշալույսն անմեռ,
Յեվ այն ժամանակ վա՛յ ձեզ, զազանե՛ր...
Մուրադ խանն անեղ փրփրաց, կատաղեց,
Սփինը խրեց Ղուկասի կրծքում,
Ամբողջ գորությամբ խառնեց, վոլորեց,

Դուրս թափեց պայծառ սիրտը մրբկուն:
Զևեց, ծվատեց ծաղկուն հերսովին,
Վորպիս անհագուրդ տաված շնագայլ,
Ու լուռ հեռացավ գոռոգությամբ սին,
Դահնի սառնությամբ ծանր ու դժմաբայլ...

6.

Դադարեց վառվելուց խարույկը սրտի,
Ու հանգավ հերոսի հոգին անպարփակ,
Դալկացավ՝ մարմարը ներմակ նակատի,
Փակլեցին աչքերը և՛ դյուքիչ, և՛ բարկ...

ՎԵՐՁԵՐԳ

Ընդվզման կրակը վառվեց մեր սրտաւմ,
Փրփրաց, փոքորկեց ովկիանը ցասման,
Յեվ ինչպես վոր գարնան գետերն են հորդում
Վորսդեց մեր հոգու դաշտերն անսահման:
Գյուղերում, հանքերում, գործարաններում
Մեծացավ ու կոփկեց պայքարի վոգին,
Ու ըմբոստ զնները մեր խոր ճորերում
Դարավոր զայրույթով բարձրացան վոտքի:
Գրոհի զնացին եին աշխարհի դեմ,
Փշրեցին կարգերը բիրս ու բռնակալ,
Ու մինչև այսոր ել զրոհում են դեռ
Մարտական շարքերը մեր հաստատաբայլ:
Նոր պայքար, նոր կոփկ եին քշնամու դեմ,
Մաքառում յերջանիկ գալիքի համար.
Ո՛, ել ո՞վ կարող ե մեր կերտածը քանդել,
Հանցնել մեր վանած կրակները անմար:

Տե՛ս, ծանոր խոր ձորից դուրս գալով հանկարծ՝
Թռչում ե գնացքը ցնծության նիշնվ.
Ու վաղը Սելանից մինչև Արտած
Կծիա լույսերի անսպաս մի ժող:
Ու վաղը ձորերում մեր անդնդախոր,
Լեռներում բարձրաբերձ, դաշտերում անափ
Չես գտնի վոչ մի տուն, մի գոմ, մի ախոռ,
Վորտեղ չշորշողա ելեկտրական լամպ:

Տե՛ս, անծիր, անսահման մեր հայրենիքում,
Ինչ հալսուն ե ցնծում մարդը հաղթական.
Յերկներում ողաչու արծիվն ե յերգում
Մեր յերկրի յերջանիկ այսորն, ապագան:
Ու բազմազգ մի խիզախ, ազատ ժողովուրդ,
Երբունքին փառապանծ քոհիչքների յերգ՝
Դաշտերում, ձորերում ու լեռներում լուրը
Նոր բախտ ե գարբնում գիշեր ու ցերեկ:
Ու ահա լսում եմ յերգը մուրների,
Հզկում են վիրխարի գրանիտ ֆարեր,
Ի՞նչ անուշ ե հնչում կարկաչք ջրի,
Ի՞նչ ուրախ ե այս ոռու վարպետն ալեհեր:
Նա զվարք հարբում ե ֆարերը Վայրի,
Յեկ նրանց տալիս ե նոր տեսք ու նոր փայտ,
Վոր վաղը բարձրանա նրանց կատարին
Սիրելի Ղուկասը վեհ ու հաղթաբայլ:

Ու ահա կանգնել ե կուռ պատվանդանին
Ղուկասի արձանը խրոխտ, տիրաբար,
Հասարակ, բայց կրակ մի դրաշակիք՝

Աչքերով վառվռուն ու արևափայլ:
Ու նայիր ի՞նչ համառ, ինչ հաստատակամ
Դրահի յե զնում հերոսն անվեհեր.
Ո՛, այդպէս վեհորեն, այդպէս հաղթական
Լեռնային արծիվն է նախրում դեպք վեր:

Այդ բոցու, ոազմաշունչ սպարտակյանին,
Քսան մեկ տարեկան Ղուկասին պայծառ
Հաղթական յերկիրս ձեռքով՝ մարդկային
Կերտել ե անխորտակ, խրոխտ մի արձան:
Իր քեկն հրացան, մարտական դիրքում,
Արեվու աշքերը գալիքին հառած՝
Յերջաներկ որերի կարոտը հոգում.
Նա հաստատ հավատով նետվում ե առաջ...

1987 թ.

Սևան



Հ ՕԾ Հ Հ Հ Ա Ե Ր

Պատ-իսմբազիր
Վ. Գ Ի Կ Ո Ր Ե Մ Ա
ՏԼԻ-ԻՍՄԲԱԶԻՐ
Ա. Ա. Գ Ա Մ Ա Վ Ա Ր Ե Մ Ա
ՍՐԲՎԳՐԻՀ
Մ. Թ Ա Մ Ա Յ Ե Մ Ա

Գլավիտի լվազոր՝ Բ—1129 Հրատ. 5199.
Պատվեր 257. Տիրաժ 3060.
Հանձնված և արտադրության 19/III 1940 թ.
Ստորագրված և տպագրութ. 28/IV 1940 թ.
Հայպետհրատի տպարան, Յեղեան, Լենինի 65

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱՅԻ ՎՐԱՅԻ ՎՐԱՅԻ ՎՐԱՅԻ

ՀՀ Ազգային գրադարան



NL0409220

ԳԻԱԸ 1 Ռ. 50 Կ.

12577

САРМЕН
ГЕРОИЧЕСКАЯ СМЕРТЬ
Гиз Аրм. ССР, Ереван, 1940 г.

22